



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մարտ, 2025




Բովանդակություն

Ֆինանսական դիրք	2
Վարկային պորտֆել և համեմատականներ	3
Տրամադրված վարկերի ծավալը	3
Տրամադրված վարկերի քանակը	3
Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ	5
Վարկերի կառավարում	6
Վերլուծական գործակիցներ.....	7

Ֆինանսական դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿԱ անդամների համախառն ակտիվները 2025թ.-ի Մարտի 31-ի դրությամբ կազմել են 229.77 մլրդ դրամ՝ 2024թ.-ի Մարտի նկատմամբ աճելով 12.4%-ով, իսկ 2025թ.-ի Փետրվարի նկատմամբ՝ 1.1%-ով: (Գծ.1):
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը 2025թ.-ի Մարտի 31-ի դրությամբ կազմել է 180.78 մլրդ դրամ՝ նախորդ տարվա Մարտի նկատմամբ աճելով 15.5%-ով, իսկ 2025թ. Փետրվարի նկատմամբ՝ 2.4% (Գծ.1):
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալը 2025թ.-ի Մարտի վերջի դրությամբ կազմել է 82.53 մլրդ դրամ՝ 2024թ.-ի Մարտի նկատմամբ աճելով 12.6%-ով, իսկ 2025թ.-ի Փետրվարի նկատմամբ աճելով 1.5%-ով (Գծ.1):

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿԱ անդամների ֆինանսական դիրքը 2024-2025թթ. Մարտի վերջի դրությամբ




Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2025թ.-ի Մարտ ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 15.89 մլրդ դրամի վարկ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 25.8%-ով, իսկ 2025թ.-ի Փետրվարի նկատմամբ՝ 12.3%-ով (Գծ. 2):

Գծապատկեր 2. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2024 և 2025 թթ.-երի Հունվար-Մարտ ամիսներին տրամադրված վարկերի ծավալը




Տրամադրված վարկերի քանակը


- 2025թ.-ի Մարտ ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 66,270 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 13.1%-ով, իսկ 2024թ.-ի Մարտի նկատմամբ նվազել է 0.4%-ով (Գծ. 3):

- 2025թ.-ի Մարտ ամսվա վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամներն ունեցել են 216,716 ակտիվ վարկառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2024թ.-ի Մարտի նկատմամբ աճել է 7.3%-ով, իսկ 2025թ.-ի Փետրվարի նկատմամբ նվազել է 26.4%-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2025թ.-ի Մարտին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 240 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը կազմել է 834 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2024թ.-ի Մարտին կազմել են համապատասխանաբար՝ 190 և 775-հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2024 և 2025 թթ.-երի Հունվար-Մարտ ամիսներին տրամադրված վարկերի քանակը




Գծապատկեր 4. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծություն



Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2025թ.-ի Մարտի դրությամբ Ասոցիացիայի անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 153 մասնաճյուղ, որը, համեմատած 2024թ.-ի Մարտի հետ, աճել է 4-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամները 2025թ.-ի Մարտի դրությամբ ունեցել են 419 վարկային մասնագետ, որը, համեմատած 2024թ.-ի Մարտի հետ, նվազել է 12-ով:
- 2025թ.-ի Մարտին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկի մեծությունը կազմել է 37.92 մլն դրամ, նախորդ ամսին՝ 33.68 մլն դրամ, իսկ 2024թ.-ի Մարտին այս ցուցանիշը կազմել է ևս 29.31 մլն դրամ (Գծ. 5):
- 2025թ.-ի Մարտի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 431.46 մլն դրամ, նախորդ ամսվա 420.17 մլն դրամի և 2024թ.-ի Մարտին 363.10 մլն դրամի համեմատ (Գծ. 5):

Գծապատկեր 5. ՀՀ ՎԿԱ անդամների տրամադրված միջին վարկը և վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով




Վարկերի կառավարում

- **Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2025թ.-ի Մարտի վերջի դրությամբ կազմել է 1,867 մլն դրամ, նախորդ ամիս՝ 1,949 մլն դրամ և 2024թ.-ի Մարտին՝ 1,466 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը աճել է 27.4%-ով, իսկ 2025թ.-ի Փետրվարի նկատմամբ նվազել է 4.2%-ով: 2025թ.-ի Մարտի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 1.03%-ը, 2024թ.-ի Մարտին ևս կազմել է 0.94% (Գծ. 6):
- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿԱ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2025թ.-ի Մարտի վերջի դրությամբ կազմել է 3,666 մլն դրամ, նախորդ ամիս՝ 3,638 մլն դրամ և 2024 թ.-ի Մարտին՝ 4,236 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը նվազել է 13.4%-ով, իսկ 2025թ.-ի Փետրվարի նկատմամբ աճել է 0.8%: 2025թ.-ի Մարտի

վերջի դրությամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 2.03%-ը, 2024թ.-ի Մարտին՝ 2.71% (Գծ. 6):

- **Զուտ դուրսգրումներ:** 2025թ.-ի Մարտի վերջի դրությամբ Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 680 մլն դրամ, նախորդ ամիս՝ 673 մլն դրամ և 2024թ.-ի Մարտին՝ 540 մլն դրամ: Զուտ դուրս գրված վարկերի ծավալը 2025թ.-ի Մարտին նախորդ ամսվա նկատմամբ աճել է 0.9%-ով, իսկ 2024թ.-ի Մարտի նկատմամբ աճել է 25.9%-ով: Ասոցիացիայի անդամների սույն թվականի Մարտի զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 0.38%-ը, նախորդ ամիս՝ 0.38% և 2024թ.-ի Մարտին 0.34% (Գծ. 6):

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿԱ անդամների վարկերի ծավալները Մարտի 31-ի դրությամբ



Վերլուծական գործակիցներ

- 2025թ.-ի Մարտի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 78.7%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2024թ.-ի Մարտին կազմել է 76.5% (Գծ. 7):

- Սույն թվականի Մարտի դրությամբ Ասոցիացիայի անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 45.7%: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ Ասոցիացիայի անդամների վարկավորման ծավալի 46%-ը իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2024թ.-ի Մարտին կազմել է 46.8% (Գծ. 7):
- 2025թ.-ի Մարտի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 35.9%, որը վկայում է Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2024թ.-ի Մարտին կազմել է 35.9% (Գծ. 7):
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը: Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության մակարդակը: 2025թ.-ի Մարտ ամսվա դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համար այս գործակիցը կազմել է 1.78, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունները 1.8 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա Մարտի համար կազմել է 1.79:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿԱ անդամների վերլուծական գործակիցներ

